ԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԻ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

***Քանոնահարուհի, ժուռնալիստ, մանկավարժ***
E-mail: anush.00000@gmail.com
Doi:10.58580/18290019-2022.1.62-80

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական
խորհրդի երաշխավորությամբ՝ Գոհար Կաղլենի Շագոյանի՝
12.10.2022 թ., ընդունվել է տպագրության՝ 20.10.2022 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 5.10.2022 թ.

# *Խաչատուր Ավետիսյան*

***Ամփոփում***

*Հեղինակը ներկայացնում է ականավոր կոմպոզիտոր Խաչատուր Մեխակի Ավետիսյանի ստեղծագործական դիմանկարն ու կյանքի ուղին: Հոդվածում հիշատակվում են տարբեր ժանրերում նրա գրած նշանակալի ստեղծագործությունները: Կոմպոզիտորը գրել է պիեսների ժանրից սկսած մինչև կոնցերտային խոշոր կտավի գործեր, այստեղ պետք է փաստենք, որ 1-ին կոնցերտը ժողովրդական գործիքի (քանոնի) և նվագախմբի համար նա է հեղինակել: Հոդվածագիրը կարևորում է այն փաստը, որ Ավետիսյանն է, որ քանոնի նվագելաոճի հայկական կատարողական արվեստի սկիզբը դրեց և այն իր տարածումը գտավ: Նրա ստեղծագործությունները կատարվում են առ այսօր հանրապետության լավագույն քանոնահարների կողմից, որոնց մասին նշվում է հոդվածում: 1977-ից նա հիմնադրել է ԵՊԿ ժողովրդական գործիքների ամբիոնը և բաժինը:*

***Բանալի-բառեր.*** *Խաչատուր Ավետիսյան, կոմպոզիտոր, քանոն, ժողովրդական գործիքներ, ՀԿՄ, ակադեմիական երաժշտական արվեստ:*

***Abstract***

*Pedagogue at YSC after Komitas, journalist, soloist, kanon player* ***Anoush Mesrop Kirakosyan. - "Khachatur Avetisyan".***

*The author presents the creative activity and life path of outstanding composer Khachatur Mekhak Avetisyan. The auther of article mentioned his significant works in various genres, ranging from the genre of pieser to concert, here it should be stated that he composed the 1st concerto for folk instrument (qanun) and orchestra. It is stated by the author of the article that Avetisyan was the one who started the qanun playing style of Armenian performing art, which soon became popular. His works are still being performed by the best qanun players of the Republic, whose names are mentioned in the article. In 1977, he founded the Folk Instruments Chair and Department of YSC.*

***Key Words:*** *Khachatur Avetisyan, composer, qanun player, folk instruments, CUA, academic musical art.*

***Абстракт***

*Канонистка-солистка, преподаватель, журналист* ***Ануш Месроповна Киракосян. -" "Хачатур Аветисян".***

*Автор представляет творческий портрет и жизненный путь композитора Хачатура Аветисяна. Композитор писал в разных жанрах, начиная с пьес и заканчивая крупномасштабными произведениями, констатирует тот факт, что первый концерт для народного инструмента (канона) и оркестра был написан им, что именно Аветисян положил начало армянскому исполнительскому искусству стиля игры канона и нашел свое распространение. Его произведения исполняются до сих пор лучшими канонистами республики. С 1977 года он основал кафедру и отделение народных инструментов ЕГК.*

***Ключевые слова:*** *Хачатур Аветисян, композитор, канон, народные инструменты, СК РА, музыкальное академическое искусство.*

## ԵՊԿ երախտավորները

*Սովետական շրջանի հայ կոմպոզիտորական դպրոցը լուրջ և նշանակալի ավանդ ունեցավ հայ դասական երաժշտության զարգացման մեջ: Կոմիտասից, Կարա Մուրզայից, Մ. Եկմալյանից, Ա. Տիգրանյանից, Տ. Չուխաջյանից, Ն. Տիգրանյանից հետո, արժանի հետնորդ դարձավ կոմպոզիտորների մի նոր սերունդ, ովքեր իրենց կատարած տիտանական աշխատանքի շնորհիվ եղան նրանց գործի շարունակողն ու երաժշտարվեստի հա-րուստ պատմության խթանը: Նրանք ստեղծագործողներ էին, որոնք, որքան էլ մեկը մյուսից տարբեր, որպես վառ անհատականություններ, այնուամենայնիվ մեկը մյուսին լրացնում էին իրենց ժանրային առանձնահատկություններով, երաժշտական մտածելակերպի բազմազանությամբ, ինտելեկտուալ պոտենցիալով, իսկ մարդկային յուրօրինակ հատկանիշներով՝ մտավորականի վառ օրինակ էին: Նրանց շնորհիվ, XX դարի հայ կոմպոզիտորական դպրոցը համալրվեց նոր անուններով՝ Գ. Եղիազարյան, Է. Միրզոյան, Ա. Հարությունյան, Ղ. Սարյան, Ա. Բաբաջանյան, Է. Բաղդասարյան, Է. Հովհաննիսյան, Գ. Հախինյան, Ա. Տերտերյան, Խ. Ավետիսյան և այլք:*

*Վերը նշված կոմպոզիտորական աստղաբույլի մեջ իր յուրահատուկ տեղն էր զբավում կոմպոզիտոր, քանոնահար Խաչատուր Ավետիսյանը, ով 60-ականների երիտասարդ սերնդից էր: Լինելով միակ կոմպոզիտորը, ով տիրապետում էր ազգային գործիքների (թառ, քամանչա, մանդոլին, նաև դաշնամուր և ջութակ), սրտացավորեն ու հետևողական աշխատանքի արդյունքում մեծ ժառանգություն թողեց, հարստացնելով դրանց նվագացանկը:*

*Տասնվեց տարեկան էր (1942 թ.), սակայն արդեն Լենինականի (այժմ՝ Գյումրի) ֆիլհարմոնիայի ժողովրդական գործիքների անսամբլի թառահարն էր (1.):*

*Եվ մի օր, տեղի ունեցած պատահական հանդիպումը ճակատագրական եղավ նրա համար: Ֆիլհարմոնիայի դիրեկտորի աշխատասենյակի մի անկյունում դրրված գործիքը հետաքրքրեց երիտասարդ երաժշտին և նրա այն հարցին, թե ինչ գործիք է, դիրեկտորը պատասխանել էր քանոն: Այս փոքրիկ դիպվածը փոխեց պատանու կյանքը, իսկ քանոնը դարձավ նրա այցեքարտը, սկզբում Լենինականում, Հայաստանում և հետո հանրապետությունից դուրս:*

*Այսպես, քանոնի լարերին նրա մատների առաջին իսկ դիպչելը կարծես «հավատարմության» երդում դարձավ, որովհետև այդ պահից նա վայրկյան անգամ վայր չդրեց գործիքը, ինքնուս սովորելով կատարելագործեց ինքն իրեն և դարձավ առաջին պրոֆեսիոնալ քանոնահարը Հայաստանում, ինչի մասին չէր խոսում:*

*Այդ տարիներին քանոն գործիքը դեռ տարածում չուներ Հայաստանում, (Վանից՝ առաջին քանոն նվագարանն իր հետ Հայաստան է բերել Գարեգին Խանիկյանը), իհարկե հետո շատերին հմայեց գեղահունչ քանոնը, բայց Խաչատուր Ավետիսյանի համար այն դարձավ կյանքի ու գործունեության կարևոր խթան: Կարծես ամեն ինչ բարեհաջող էր ընթանում, որովհետև հայրենի քաղաքում սիրվեց, լավ երաժշտի համբավ ձեռք բերեց ու ճանաչում, սակայն ստեղծագործ միտքը, որ հանգիստ չէր տալիս, նրան բերեց Երևան: Դեռ ուսումնարանում (1949 թ.) ուսումնառության տարիներին սկսեց մասնակցել Անդրկովկասում տեղի ունեցող գրականության և արվեստի տասնօրյակներին, տարբեր մրցույթների և օլիմպադաների: Ռ. Մելիքյանի անվան ուսումնարանի կոմպոզիտորական (այժմ՝ ստեղծագործական) բաժնում, Գրիգոր Եղիազարյանի դասարանում Ավետիսյանը սովորեց կոմպոզիցիայի հիմունքներ: Այնուհետև նրան փոխարինեց Է. Բաղդասարյանը: Բացի կոմպոզիտորական տեխնիկայի յուրացումից և երաժշտատեսական առարկաներին ծանոթանալուց, այս մեծանուն կոմպոզիտորների շնորհիվ նրա մոտ սեր առաջացավ դեպի դասական երաժշտությունը, ինչը հետագայում առիթ դարձավ կրթությունը կոնսերվատորիայում շարունակելու համար: Այս ընթացքում, քանոնահար Խաչատուր Ավետիսյանն իհարկե չդադարեցրեց համերգային գործունեությունը: Դրան զուգահեռ, առաջին կուրսից քանոն գործիքի համար ակտիվ ստեղծագործում էր (Գրիգի «Պեր Գյունտ» սյուիտից «Անիտրայի պարի», «Օրորոցային» պիեսների փոխադրումը, «Գետափին» երգը՝ Սարմենի խոսքերով):*

*1950-ին ուսումնարանում բացված քանոնի դասարանը վստահվեց Խաչատուր Ավետիսյանին: Դա մեծ իրադարձություն էր հանրապետությունում և մեծ պատասխանատվություն նրա համար, որովհետև բացի դասավանդումից, ծրագրի կազմումը նս Ավետիսյանի ուսերին էր:*

*Ժամանակն անցնում էր, դժվարություններն արժանապատիվ հաղթահարվում էին, իսկ հաջողությունները չէին ուշանում: Այդ ընթացքում Խաչատուր Ավետիսյանը Բեռլինում մասնակցեց երիտասարդության և ուսանողության խաղաղության պաշտպանության երրորդ համաշխարհային փառատոնին (1951 թ.) և արժանացավ առաջին մրցանակի ոսկե մեդալի: Այս փառատոնին ժողովրդական գործիքների երաժիշտ-կատարողներն առաջին անգամ էին մասնակցում: Ծրագրում բնականաբար ընգրկված էին նրա մշակումները Է. Գրիգի «Պեր Գյունտ» սյուիտից՝ «Անիտրայի պարը», Սայաթ-Նովայի «Էշխեմետ»-ը, «Էքսպրոմտ» և «Հայկական ֆանտազիա» ստեղծագործությունները: Վերադարձից հետո նա համերգներով հանդես եկավ Կոնսերվատորիայի դահլիճում, Ուսումնարանի դահլիճում, արվեստի աշխատողների տանը և հանրակրթական դըպրոցներում:*

*Կատարողական ասպարեզում ունեցած հաղթանակներին հաջորդում էին մանկավարժական գործունեության մեջ ունեցած հաջողությունները: Մոսկվայում կայացած Երիտասարդության և ուսանողության վեցերորդ համաշխարհային փառատոնում (1957 թ.) Քանոնահարների անսամբլը հաջողությամբ ելույթ ունեցավ և նվաճեց երկրորդ մրցանակ՝ արծաթե մեդալ (ղեկավար՝ Խաչատուր Ավետիսյան) և նույն տարում Հայաստանի երիտասարդության առաջին փառատոնում նվաճեց առաջին մրցանակ՝ Ոսկե մեդալ:*

*Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում Խ. Ավետիսյանը սկիզբ դրեց քանոն գործիքի դա սավանդմանը, այնուհետե նրա սաները շարունակեցին նրա գործը՝ դասավանդելով հանրապետության շրջաններում ու գյուղե-*

*Խաչատուր Ավետիսյանի համերգը Առնո Բաբաջանյանի հետ, Փարիզ*
*Khachatur Avetisyan's Concert With Arno Babajanian, Paris*
*Концерт Хачатура Аветисяна С Арно Бабаджаняном. Париж*

*րում բացված երաժշտական դպրոցներում: Ուսումնական ծրագրի հետ կապված խնդրի լուծումն էլ, տարբեր ժամանակներում լույս տեսած նրա երեք դասագրքերը եղան*:*

*Կոմիտասի անվան կոնսերվատորիա ընդունվելուց հետո (1954 թ.), երբ իմացան նրա կատարողական շնորհքի մասին, խնդրեցին ելույթ ունենալ: Համերգին ներկա կոնսերվատորիայի պրոֆեսոր Կ. Սարաջևի խոսքը նրան շատ ոգևորեց: Ականավոր դիրիժորը նրան հորդորեց շարունակել կատարողական գործունեությունը:*

*Կոնսերվատորիայում ուսանելու տարիներին (1954-1959 թթ.) Ավետիսյանը կոմպոզիցիա է սովորում Էդվարդ Միրզոյանի դասարանում: Այս արդյունավետ համագործակցությունը ոգևորում էր և՛ ուսուցչին, և սանին: Մեծ է հմուտ մանկավարժի և ճանաչված կոմպոզիտորի՝ ի դեմս Է. Միրզոյանի, դերն Ավետիսյանի ստեղծագործական կյանքում,* ինչը նա հպարտությամբ էր նշում:

*Ուսանողական տարիները շատ բեղուն էին նաև ստեղծագործական առումով: Ահա, այդ տարիներին գրված ստեղծագործությունների ոչ ամբողջական շարքը «Պարային սյուիտ», «Տոնական նախերգանք», «Անդանտե» և «Սկերցո» մեծակտավ գործերը, «Իմ Լենինական», «Մախմուր աղջիկ», «Իմ անուշ տավիղ», «Կռունկները», «Հովվի երգը» հանրահայտ երգերը և այլն:*

*1977 թ. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում բացվեց Ժողովրդական գործիքների և երգեցողության ամբիոնը: Հիմնադիրներից՝ Խաչատուր Ավետիսյանը մեծ ջանքեր գործադրեց այդ հարցում: Ժողովրդական գործիքների ամբիոնի վարիչ նշանակվեց վաստակաշատ կոմպոզիտորն ու մանկավարժը, ով առաջին օրվանից դասավանդել և ղեկավարել է այն մինչև իր կյանքի վերջը (1996 թ.): Սա իրադարձություն էր, ինչի շնորհիվ ազգային նվագարաններին տիրապետող երիտասարդ կատարողները կարող էին բարձրագույն կրթություն ստանալ: Տաղանդավոր ու բազմավաստակ մանկավարժի համար պրոֆեսիոնալիզմն առաջնահերթություն էր ամեն ասպարեզում, ինչն աշխատում էր փոխանցել սաներին: Կոնսերվատորիայում, նրա դասարանում ուսումնառություն են անցել այսօր արդեն ճանաչված ու վաստակաշատ քանոնահարներ՝ Հասմիկ Լեյլոյանը, Ալվարդ Միրզոյանը, Անուշ Կիրակոսյանը, Կարինե Հովհաննիսյանը, Ազնիվ Մինասյանը, Անահիտ Վալեսյանը, ովքեր դաստիարակվել են որպես բարձր ճաշակի ու երաժշտական նուրբ զգացողության տեր արտիստներ, հայ կատարողական երաժշտարվեստին ազնվորեն ծառայելու նվիրվածությամբ համակված:*

*Որպեսզի կարողանանք ճիշտ գնահատել այս իրադարձությունը, հարկավոր է վերհիշել միայն, որ 1926-1928 թթ. Երևանի նորաստեղծ կոնսերվատորիայում Սաշա Օգանեզաշվիլիի (Ալեքսանդր Հովհաննիսյան) ջանադիր ու հետևողական գործունեության շնորհիվ բացվեց ժողովրդական գործիքների բաժինը, որի հետ նա մեծ հույսեր էր կապում: Սակայն այսչափ կարևորություն ունեցող բաժինն անհասկանալի պատճառով փակվեց: Եվ միայն 50 տարի հետո, Խաչատուր Ավետիսյանի համառ աշխատանքի շնորհիվ իրականացավ նաև մեծ երաժշտի՝ Ս. Օգանեզաշվիլու երազանքը*:*

*Պատիվ ունենալով լինելու նրա սանը, ճանաչելով Խաչատուր Ավետիսյան քանոնահարին, կոմպոզիտորին ու մանկավարժին, բնականաբար հիշողություններ կան կապված նրա գործունեության հետ: Որպես մարդ՝ պատվախնդիր էր, չափազանց համեստ, որոշումներն ու խորհուրդները ծանրակշիռ, անչափ հետաքրքիր զրուցակից էր ինչ թեմայով էլ այն լիներ: Խոսքը վարպետորեն փոխել գիտեր, որից հետո սկսվում էր ուրախ զրույց, ինչն առանց նրա համեմված անեկդոտի չէր ավարտվում: Բնավորությամբ թեև լուրջ էր՝ արվեստագետին հատուկ խստությամբ, սակայն երբեք տխուր մարդ չէր, բարեհամբույր էր ու անբացատրելի հմայք ուներ, ինչի շնորհիվ գերբնականորեն իրեն էր ձգում մարդկանց:*

---

* Խ. Ավետիսյան «Քանոնի ձեռնարկ» առաջին մաս, 1-3-րդ դասարանների համար 1968 թ., Խ. Ավետիսյան «Քանոնի ձեռնարկ» երկրորդ մաս, բարձր դասարանների համար 1983 թ., Խ. Ավետիսյան «Ստեղծագործություններ քանոնի համար» 1986 թ.:

* *Ահա թե ինչ է գրել Օգանեզաշվիլին այդ մասին.* «...Ես համոզվեցի, թե Եվրոպայում ինչ մեծ հետաքրքրություն կա արևելյան և առանձնապես հայկական երաժշտության ուսումնասիրության նկատմամբ: Դժբախտաբար այդ ուղղությամբ մեզանում շատ քիչ բան է արվում, հարկավոր է լուրջ ուշադրություն դարձնել Երևանի կոնսերվատորիայի արևելյան բաժնի վրա, քանի որ ինչպես ասել են Եվրոպայի հեղինակավոր երաժիշտները, Երևանի կոնսերվատորիան պիտի տոն տա արևելյան երաժշտության ուսումնասիրության գործին» (2.)

# ԵՊԿ երախտավորները

*Խաչատուր Ավետիսյան ֆենոմենի մասին խոսելիս, անպայման է հիշատակել նրա անմարդկային չափերի հասնող աշխատասիրությունը, որի խոսուն վկան նրա թողած իրապես ահռելի երաժշտական ժառանգությունն է, որը ժանրային սահմանափակում չունի: Խորապես ազգային կոմպոզիտոր լինելով՝ նա ստեղծագործեց դասական երաժշտության ասպարեզում: Գրեց երգեր, որոնց քնարականության ու ազգային երգի տարրերի համաձուլումը, բառերի և երաժշտության զարմանալի ներդաշնակությունը, նրբանկատ ու թափանցիկ գործիքավորման հետ կատարելության էին հասցնում դրանց: Բազմաթիվ են Ավետիսյանի ստեղծած պարեղանակները, ժողովրդական գործիքների համար գրված մեծ և փոքր կտավի ստեղծագործությունները: Խ. Ավետիսյանի երաժշտական գործունեությունը մի նոր ուղղություն էր՝ մի առանձին որակական չափանիշ: Այն յուրատեսակ էր իր ձևով և բովանդակությամբ որտեղ իշխում էր բարձր ճաշակը, կարճ ֆրազաներում՝ նուրբ մելիզմատիկան (sp-ից մինչև fff) և ազգային երգի այն աստիճանի իմացությունը, որ նրա երգերը ցայսօր զարմանալիորեն շփոթում են ազգային երգի հետ:*

*Միայն քանոնի համար Խաչատուր Ավետիսյանը գրել է երկու կոնցերտ (մենանվագ քանոնի և սիմֆոնիկ նվագախմբի համար), չորս սոնատ, երկու երաժշտական խորեոգրաֆիկ պատկեր՝ «Կախարդված ծաղիկներ» և «Զարթոնք», բազմաթիվ կոնցերտային պիեսներ և ժողովրդական երգերի մշակումներ, դասական ստեղծագործությունների փոխադրումներ, նաև դուետներ, տրիոներ, կվարտետներ և այլն: Առաջին կոնցերտով նա սկիզբ դրեց ժողովրդական գործիքների համար գրվող կոնցերտի ժանրին:*

*Խաչատուր Ավետիսյանը Սովետական Հայաստանի առաջին քանոնահարն է և քանոնահարների դպրոցի հիմնադիրը: Նա հիմք դրեց քանոնի նոր նվագառճին, որը տարբերվում էր մինչև այդ գոյություն ունեցող արևմտյան ձևից (սկսած մատնադրումից): Այդ է պատճառը, որ Խաչատուր Ավետիսյանի՝ քանոնի համար գրված ստեղծագործությունները, ինչպես ինքն էր ասում, «հայկական քանոնի» համար է: Նա համոզված էր, որ դա ամուր հող է, որպեսզի երաժիշտ-քանոնահարն իր կատարումներում չշեղվի արևելյան օտարամուտ ելևէջներ ներմուծելով և շատ խիստ հետևողական էր դրան:*

*Նրա գրչին է պատկանում նաև «Անահիտ» բալետը, երաժշտություն է գրել «Խաթաբալա», «Երևան» ֆիլմերի համար: Տարբեր տարիների Խաչատուր Ավետիսյանը եղել է Հայաստանի պարի պետական և Հայաստանի Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլների գործիքային մասի ղեկավարը: Այս կոլեկտիվներում նրա տիտանական աշխատանքի շնորհիվ ամբողջական ծրագրեր են թարմացվել, ստացել գեղարվեստական նոր որակ ու անջնջելի տպավորություն թողել հանդիսատեսի վրա: Ավետիսյանի երգերն ու գործիքային ստեղծագործությունները հնչում էին Ա. Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլի կատարմամբ՝ ռադիոյով և հեռուստատեսությամբ:*

*Խաչատուր Ավետիսյանը Էդվարդ Միրզոյանի հետ, 1970 թ.*

*Khachatur Avetisyan with Edward Mirzoyan, 1970*

*Хачатур Аветисян с Эдвардом Мирзояном. 1970*

*Կոմպոզիտոր, վիրտուոզ քանոնահար, Արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, հմուտ մանկավարժ, պրոֆեսոր՝ Խաչատուր Ավետիսյանի դերն ու նշանակությունն անչափ մեծ է հայ երաժշտարվեստի զարգացման գործում, իսկ թողած ժառանգությունը բարձրարժեք: Նրա ամեն մի ստեղծագործությունն ազգային մտածողության մի նոր դրսևորում է: Ավետիսյան կոմպոզիտորի գունապնակը բազմաժանր է, սիրո ու քնարականության շղարշով պատված: Նրա երգերի մեղեդայնությունը զեփյուռի նման շոյում է մարդու հոգին, խաղաղությամբ պարուրում ու տանում դեպի հեռուները:*

*Այսպիսին են մեծերը, նրանց ստեղծագործություններն անպայման աստվածային ու անբացատրելի ինչ որ բան են ունենում իրենց մեջ:*


ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Արազյան Թ. Մ.,* Խաչատուր Ավետիսյան, Եր., Հայաստան, 1973 թ.:
2. *Օգանեզաշվիլի Ս.,* Զանազան նյութեր երաժշտության վերաբերյալ, ԳԱԹ ֆոնդ, նո. 344, 2-րդ տետր:

*Arazyan T. M.,* Khachatur Avetisyan, Yerevan, Hayastan, 1973.
*Oganezashvili S.,* Miscellaneous Materials on Music, MLA fund, no. 344, 2nd notebook.

REFERENCES

1. *Arazyan Th. M.,* Khachatur Avetisyan, Yer., Hayastan, 1973.
2. *Oganezashvili S.,* Zanazan nyuther yerazhshtuthyan veraberyal, GATh fond, no. 344, 2-rd tetr.


* Այս հարցում նրա մեծագույն ոգևորողը Ալեքսանդր Սպենդիարյանն էր, ով մեծագույն ձեռքբերում էր համարում ազգային գործիքների բաժնի գո- ությունը կոնսերվատորիայում: Սակայն, ցավոք այս ամենը չիրականացավ, որովհետև անհաս- կանալի պատճառներով փակվեց Երևանի կոնսերվատորիայի ժողովրդական գործիքների բաժինը: Այդ տարիներին բաժնում դասավանդել են անվանի երաժիշտներ, քա- մանչահար՝ Սաշա Օգանեզաշվիլին, թառահար՝ Սողոմոն Ալթունյանը, քաման- չահար՝ Գուրգեն Միրզոյանը և այլք:

***Հեղինակի մասից.*** *ԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ [ծ. 14.12.1957 թ., ք. Ալավերդի (Լոռու մարզ, ՀՀ): Ավարտել է ԵՊԿ-ի ժողովրդական գործիքների բաժինը՝ քանոն մասնագիտացմամբ (1990 թ., պրոֆ.՝ Խ. Ավետիսյանի դասարան), 1993-ին՝ ասպիրանտուրան, «Գալիք» համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը: Մենակատար քանոնահար, ժուռնալիստ ԵՊԿ դասախոս, Ժուռնալիստների միության անդամ (2020): Որպես քանոնահարուհի աշխատել է՝ 1979–1986 թթ. Հայաստանի Թ. Ալթունյանի անվ. Երգի-պարի պետ. անսամբլում, 1986–1987 թթ. Հայաստանի Գուսանական պետ. անսամբլում, 1991–1992 թթ. Հայաստանի Պարի պետական անսամբլում, 1993–2001 թթ. ՀՀ ռադիո հեռուստատեսության Ա. Մերանգուլյանի անվ. ժողովրդական գործիքների անսամբլում: 1994–1997 թթ. ղեկավարել է Երևանի Հատուկ գնդի ժողովրդական գործիքների անսամբլը և եղել է քանոնահարը: Դասավանդել է՝ 1979–1983 թթ. Արմավիրի (Հոկտեմբերյան) շրջանի Ձերժինսկու անվ. սովխոզի երաժշտական դպրոցում, 1990–2009 թթ. Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում, 2009-2021 թթ. Կ. Սարաջյանի անվ. երաժշտական դպրոցում՝ ժողովրդական գործիքների բաժնի վարիչ, վարում է քանոնի դասարանը և ղեկավարում ժողգործիքների անսամբլը: 2019-ից մինչև այժմ Ա. Բաբաջանյանի երաժշտամանկավարժական քոլեջում դասավանդում է մանկավարժական պրակտիկա: Հեղինակ է՝ քանոնի 4 ուսումնական ձեռնարկի՝ «Անմար գոհարներ» (2 հատ., Եր., 2005 թ. և 2010 թ.), «Փոխադրումներ քանոնի համար» (2010 թ.), «Խաչատուր Ներսիսյանի կոնցերտային պիեսները քանոնի համար» (2010 թ.), գիտական և հրապարակախոսական հոդվածների՝ 2000-ին «World music awards» միջազգային մրցանակաբաշխության (ԱՄՆ) մրցանակակիր է:*

***Об авторе:*** *АНУШ МЕСРОПОВНА КИРАКОСЯН (род. 14 декабря 1957, г. Алаверди, Лорийский р-н, РА), солист ка канонистка, журналист, педагог ЕРК, член Союз журналистов Аремении (2020). Автор четырех учебников для канона: “Анмар гоарнер”, ч. 1 (2005), часть 2 (2010); “Переложения для канона”, 3-я книга (2010); “Концертные пьесы для канона Хачатура Нерсисяна” (2010). Автор ряда статей в газетах “Еражишт”, “Ай зинвор”, “Мартик”, в журналах “Музыкальная Армения”; “Хоснак”, Бейрут (Ливан). Работала: с 1979 по 1983 в музыкальной школе Дзержинского совхоза Армавирского р-на; с 1980 по1986 - в Гос. ансамбле песни и танца Армении им. Т. Алтуняна. Работала в Ансамбле на родных инструментов им. А. Мерангуляна Гостелерадио Армении (1993-2001), ка но нистка и руководитель Ансамбля народных инструментов Ереванского особого полка (1994-1997). Преподавала: в Госконсерватории им. Комитаса (1990-2009); зав.отделением народных инструментов, педагог по классу канона в ДМШ им. К. Сараджяна (с 2009 по 2021), ведет педагогическую практику в Муз.-пед. колледже им. А. Бабаджаняна (с 2019 по сей день); с 1986 по 1987 - в Гос. гусанском ансамбле; с 1990 по 1991 - в Гос. ансамбле танца Армении; с 1993 по 2001- в Гос. ансамбле на родных инструментов Радио и Телевидения РА им. А. Мерангуляна; с 1990 по 2009 - в Госконсерватории им. Комитаса.*

***About the author:*** *ANUSH MESROP KIRAKOSYAN (born 14.12.1957, Alaverdi, Lori region). In 1990 she graduated from the Department of Folk Instruments of the YSC (class of Prof. Kh. Avetisyan), in 1993 she completed her post-graduate studies at the Faculty of Journalism at "Galik" University. She is. a soloist kanon player, as well as a music educator at YSC, member of Journalists' Union of Armenia (2020). She worked as a kanon player at Armenian State Folk Song and Dance Ensemble named after T. Altunyan in 1979-1986, at Armenian State Ensemble of Minstrel Folk Songs in 1986-1987, Armenian State Dance Ensemble in 1990-1991, at Aram Merangulyan Public Radio Ensemble of Folk Instruments in 1993-2001. In 1994-1997 she was leader of the Ensemble of Folk Instruments of Yerevan Special Regiment. and was the kanon player. She taught. at Armavir (Hoktemberyan) State farm music school named after Dzerzhinsky in 1979-1983, at Yerevan Komitas State Conservatory in 1990-2009, at Sarajyan music school in 20092021 as Head of the Folk Instruments Department, she leads the kanon class and the Folk Instruments Ensemble. Since 2019 she has been teaching pedagogical practice at Babajanyan Music and Pedagogical College. She is author of 4 academic manuals for kanon: "Priceless Jewels" (2 volumes, Yer., 2005 and 2010), "Transpositions for kanon" (2010), "Khachatur Nersisyan's concert pieces for kanon" (2010)), scientific and publicistic articles. In 2000, she was awarded a prize at the International ceremony "World Music Awards" (USA).*